

ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

ԲՆԱԿՈՒՈՂ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ

Տարբեր դարերում այլևայլ պատճառներով մահմետականութիւն ընդունած հայերի մասին քիչ է գրուել: Գիտնականները յաճախ շրջանցել են այդ թեման կամ էլ բաւարարուել են միայն կրօնափոխութեան որոշ փաստեր արձանագրելով¹: Անշուշտ, այստեղ մեծ էր Թուրքիայի իշխանութիւնների դերը, որոնց հաճոյ չէր իրենց հպատակներին բռնի մահմետականացման մասին նիւթերի հրապարակումը: Կարեւոր հանգամանք էր նաեւ հայ իրականութեան մէջ տիրող այն մտայնութիւնը, թէ կրօնափոխները այլեւս հայ չեն:

Սորհրդային Միութեան տարածքում բնակւող մահմետական հայերի մասին եւս տասնամեակներ շարունակ քար լռութիւն էր պահպանուում: Ինչո՞ւ էին նրանք խօսում Համշէնի բարբառով, ի՞նչպէս էին յայտնուել Ղազախստանի տափաստանային եւ Ղրղզստանի լեռնային գիւղերում, ե՞րբ էին զատուել իրենց եղբայրներից՝ քրիստոնեայ համշէնահայերից, որոնց ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբներին ճակատագիրը նետեց Սեւ ծովի աբխազական եւ ռուսական սփերը:

Պատմական համառօտ ակնարկով փորձենք պատասխանել այս հարցերին:

Տրապիզոնի նահանգի Համշէն գաւառի (այժմ՝ Թուրքիայի Ռիզէի նահանգի կազմում) մահմետական հայերին յիշատակել է Հ. Ղուկաս

1. Բիւթէ շատ ընդարձակ շրջանակի մահմետականացման հարցեր են շօշափում ՂԱԶ. ՔԱՀ. ՅՈՎԱՆՔԵԱՆԻ «Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին», (Թիֆլիս, 1904), եւ ԱՏՐՊԵՏԻ «Ճորոխի աւագանը», (Վիեննա, 1929) գրքերը եւ Գ. ԱՄՍՏՈՒՆՈՒ «Բարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր» յօդուածաշարը («Նայիրի» շաբաթաթերթ, Պէյրուս, 1980, թիւ 1-2), որ թէեւ հիմնուած է արդէն յայտնի գրաւոր աղբիւրների վրայ, բայց կարեւոր փորձ է հարցին առաւել լայն տարածական եւ ժամանակային ընդգրկում տալու:

Վրդ. Ինճիճեան²: 1818ին Սեւ ծովի առափնեակով շրջագայելիս Հ. Մինաս Վրդ. Բժշկեան հանդիպել է կրօնափոխ համալսարանի. «Համալսարանի կէս-կէս են. շատը դարձած են, բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն, ժամոց եւ ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը Վարդապատի եւ Վերափոխման կ'երթան եկեղեցին մոմ կը վառեն եւ մատաղ կ'ընեն իրենց պապերուն հոգուն համար. բոլորը հայերէն կը խօսին»³:

Այնուհետեւ, այս կողմերն են այցելել ամերիկացիներ Սմիթն ու Դուալթը, որոնք 1833 թ. Բոստոնում հրատարակած ճամբորդական նօթերում գրել են. «Հայերի մէջ նոյնպէս... մի զգալի մասը դաւանում է մահմետականութիւն: Երջանը, որտեղ նրանք բնակւում էին... կոչւում է Համալսարան: Մեր գրուցակիցը՝ տրապիզոնցի մի կաթողիկէ հայ, ասաց, որ բնակչութիւնը մօտ 3-4 հազար հայ ընտանիք է, որոնք բնակւում են 70 կամ 80 գիւղերում: Մեծամասնութիւնը մահմետականութիւն է ընդունել, մօտ 200 տարի առաջ, բայց նրանք առ այսօր խօսում են հայերէն եւ շատերի կանայք ուրիշ լեզու չգիտեն»⁴:

Տասը տարի անց՝ 1843-44 թ. Տրապիզոնի նահանգի ծովագարդ գաւառների՝ Սեւ Գետի (սիւրմենէ) եւ Համալսարանի աշխարհագրութեանն ու բնակչութեան նիստուկացին է ծանօթացել Կարլ Կոխը⁵:

Սեւ Գետի եւ Համալսարանի կրօնափոխութեան սահմակեցուցիչ դըրուագներն է 1860-70ական թուականներին գրառել համալսարանայ նշանաւոր բանահաւաք Սարգիս Հայկունին: Ըստ նրա, 1700ական թուականներին Համալսարանում կար 8-10 հազար, իսկ Սեւ Գետում՝ 5-6 հազար տուն հայութիւն, որոնք ընդամենը 4-5 քահանայ ունէին: Հայերը Տէր Կարապետի գլխավորութեամբ հերոսաբար դիմադրում են նրանց բռնի կրօնափոխելու եկած թուրք ենիչերիներին, մոլլաներին ու խաժամուփին, բայց, Տրապիզոնի վալիից օժանդակ զօրք ստանալով, թուրքերը ի վերջոյ կոտորում են մեծաթիւ հայերի եւ ներխուժելով Թորոսոց գիւղի եկեղեցին՝ սպաննում Տէր Կարապետին: Ժողովրդի մի մասը փախչում է, միւսները նահատակւում են, իսկ մնացեալները ստիպուած են լինում առերես կրօնափոխուել, որպէսզի գոնէ երեխաների կեանքը փրկեն: Այսպէս, հրով ու սրտով կրօնափոխւում են Սեւ Գետի եւ Համալսարանի բազմաթիւ գիւղեր⁶: Տէր Կարապետի ընտանիքից

2. Ինճիճեան Հ. ՂՈՒԿԱՍ, Աշխարհագրութիւն Զորից Մասանց Աշխարհի, Մասն Ա., Ասիա, Վենետիկ, 1806, էջ 397:

3. ԲժՇԿԱՆ ՄԻՆԱՍ ՎՐԴ., Պատմութիւն Ողմտտի, որ է Սեւ Մով, Վենետիկ, 1819, էջ 97:

4. SMITH ELI and H. G. O. DWIGHT, *Missionary Researches in Armenia*, Boston, 1833, p. 325.

5. Dr. KOCH KARL, *Wanderungen im Oriente, II, Reise im Pontischen Gebirge und Türkischen Armenion*, Waimar, 1846, p. 1-40.

6. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆԻ, Նշխարներ. կորած ու մոռացուած հայեր. (Տրապիզոնի հայ-

փրկուածները բնակութիւն են հաստատում Տրապիզոնի գաւառի Կալաֆկա գիւղում, ուր նրա որդին քահանայ ձեռնադրուելով ուխտ է անում, որ իր սերունդը Տէր Կարապետ անունով քահանայութիւն անի եւ տարին մէկ անգամ ծալտեալ այցելի Սեւ Գետում մնացած հայրենակիցներին⁷:

Սեւ Գետի կրօնափոխութեան եւ Տէր Կարապետի մասին որոշ արժէքաւոր տեղեկութիւններ է պարունակում նաեւ Պ. Թումայանցի 1870 թ. գրած «Պոտոսի հայերը» ուսումնասիրութիւնը⁸:

1840ական թուականներին մի ա՛յլ ընտանիքից (Տավլաշեան) մէկը Տէր Կարապետ անունով քահանայ ձեռնադրուելով շարունակում է մեծ նախորդների գործը: Նա եւս կեանքը վտանգելով այցելում է կրօնափոխների գիւղերը, ուր նրան էին սպասում հազարաւոր հայեր, որոնց մի մասը, չնայած մահապատժի վտանգին, ցանկանում էր վերադառնալ նախնեաց հաւատքին: Նա փորձում է այդ գիւղերում հայկական դպրոցներ բանալ եւ այդ նպատակով քանիցս դիմում է Պոլսի մեծահարուստներին⁹: Կրօնափոխ համչէնահայերի շրջանում տէր Կարապետ Տավլաշեանի գործունէութեան մասին խիստ հետաքրքրական նիւթեր կան Տրապիզոնի առաջնորդական փոխանորդ Տէր Վահան Քհչյ. Սոյեանի անտիպ յուշագրութիւնում¹⁰:

1870ական թուականներին Սեւ Գետի եւ Համչէնի կրօնափոխների մի մասը գաղթում է արեւմուտք եւ Նիկոմեդիայում (Իզմիր) հիմնում մի քանի գիւղեր¹¹: Այսպիսով, 19րդ դարի երկրորդ կէսին կրօնափոխ

մահմետական գիւղերն ու նրանց անաղութիւնները), «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 230-243, 293-297: Այնուհետեւ «Տէր Կարապետ քահանայ Թորոսեցի» վերնագրով տպագրուել է «Հայոց մոր վկաներ» ժողովածոյի մէջ (Վաղարշապատ, 1903, էջ 702-709): Հայկունուց օգտուելով Հ. Աճառեան վերապատմել է իր «Բնմուտքիւմ Համչէնի քարքառի» գրքում, Երեւան, 1947, էջ 5-8:

7. 1984ին Կրասնոդարի երկրամասի Մայկով քաղաքի մօտակայ հայաբնակ Պրոլետարսկ գիւղում հանդիպեցի Տրապիզոնցի Կալաֆկա գիւղացի 84ամեայ Մարգար Դուկասեանին, որի տան պատին փակցուած էր 1906ին իր պապի գործած մի կարպետը, որի վրայ հիւսուած էր. «Տէր Սորէն քահանայ Տէր Կարապետի, ծն. 1831 թ.»: Տէր Սորէնը գոհուել է գաղթի ճամբաներին՝ 1915ին՝ նրա թող՝ Մարգար Դուկասեանը, պատմեց Տէր Կարապետի մասին իր իմացած մի քանի պատմութիւնները, որոնք վկայում էին, թէ հայրենասէր քահանայի յիշատակը պահպանուել է նոյնիսկ այսքան տարի անց:

8. ԹՈՒՄԱՅԱՆՑ Պ., Պոմոտոսի հայերը, աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, Լուժա, Տիփսա, 1899, Յուլիս, էջ 174-177:

9. Լազիստամի հայեր, Մամկալարժամոց, Պետերբուրգ, 1887, թիւ 1, էջ 13-15:

10. Տե՛ս ՎԱՀԱՆ ՔՀՆՅԵ. ԽՈՅՆԱՆԻ անտիպ յուշագրութիւնից հատուածներ է տպագրել Յովակիմ Յովակիմեանը (Արշակունի) իր «Պատմութիւն Հայկական Պոմոտոսի» (Պէյրութ, 1967, էջ 64-68) գրքում, բայց ցաւօք չի՛ ծանօթագրել, թէ որտեղ է գտնուում յուշագրութիւնը:

11. ԳԱՍՊԱՐԱՆ ՄԻՆԱՍ Գ., (ՖԱՐՀԱՏ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառի մէջ, Պարտիզակ, 1913, էջ 81-103:

համչէնահայերի բնակավայրերի շղթան ձգւում էր Նիկոմեդիայից մինչեւ Ռիզէ, Սոփա եւ Բաթում:

Քանի որ Տրապիզոնի նահանգի նաւահանգիստները եւ յարակից տարածքները գտնուում էին Ռուսական կայսրութեան ռազմական հետաքրքրութիւնների շրջանակում, ապա ռուսական զինուորականները մանրամասն ուսումնասիրում են Լազիստանի սանջաքի աշխարհագրութիւնը, ըստ հարկին անդրադառնալով նաեւ երկրամասի բնակչութեան ծագումնաբանութեան: Կրօնափոխ համչէնահայերի մասին այդպիսի յիշատակութիւն կայ ռուսական բանակի փոխգնդապետ Գ. Կազբեկի «Ռազմավիճակագրական եւ ռազմավարական ակնարկներ Լազիստանի սանջաքի» գրքում (1876 թ.)¹²:

1877-78 թ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ կրօնափոխ համչէնցիների բնակավայրերի մի մասը անցաւ ռուսաց տիրապետութեան տակ: Այդ տարիներին «Մշակը» տեղեկացնում է, որ Բաթումի մերձակայքում ապրում են համչէնցի հայ-մահմետականներ, որոնք «ընտանեկան խօսակցութիւնները բոլորովին հայերէն լեզուով են կատարում»¹³: Այնուհետեւ Գրիգոր Արծրունին է «Մշակի» ընթերցողներին յիշեցնում, որ երբ «չատ տարի սրանից առաջ մենք այն միտքը յայտնեցինք, թէ Ռուսաստանից նուաճուած Կարսի եւ մասամբ Բաթումի նահանգում բազմաթիւ են հայ-մահմետականներ, որոնք բռնի կերպով ընդունեցին իսլամը թիւրքաց տիրապետութեան տակ, մեզ ոչ ոք չէր ուզում հաւատալ»¹⁴: Նա հայ հոգեւորականներին կոչ է անում օգնել մեր տարաբախտ հայրենակիցներին նախնեաց կրօնին վերադառնալու, մանաւանդ որ նրանք արդէն քրիստոնեայ պետութեան կազմում են: Թերթը յետագայում էլ է անդրադառնում մահմետական հայերին¹⁵, բայց անարդիւնք:

20րդ դարի սկիզբն ռուսական զիտական մամուլում երբեմն յօդուածներ են տպագրւում, որոնցում յիշատակւում են նաեւ Սոփայի շրջանի կամ Բաթումի մօտակայ գիւղերի կրօնափոխ համչէնահայերի: Հ. Մեղակորեանը «Ճորոխի աւազանի ազգութիւնների զարգացման ազգագրական պայմանների հարցի մասին, փոքրածաւալ յօդուածում՝ լազերի, աջարների եւ ճորոխի աւազանի միւս բնակիչների կարգին որոշ դիտարկումներ է անում նաեւ կրօնափոխ համչէնցիների մասին»¹⁶:

12. Военно-статистический и стратегический очерки Лазистанского сандака, составленные Генерального Штаба подполковником Казбеком, Тифлиси, 1876, ст. 27-28.

13. ԳԱԹԷՆՆԱՆ Յ., Նամակ Արդահամից, «Մշակ», Թիֆլիս, 1883, Նոյեմբերի, Թիւ 168:

14. Գ. Ա., Մահմետական հայեր, «Մշակ», Թիֆլիս, 5 Փետրուարի, Թիւ 13:

15. Ա., Նամակ Թիւրքիայից, «Մշակ», Թիֆլիս, 1890, 7 Յուլիսի, Թիւ 76:

16. МЕГАВОРИАНЪ А. П., Къ вопросу объ этнографическихъ условияхъ развитія

Առաւել ընդարձակ տեղեկութիւններ կան՝ է. Լիոզենի «Ռուսական Լազիստանի փորձ» պատմա-ուղեգրական ակնարկում¹⁷: Իսկ թուրքահայ Լազիստանի մասին 1910 թ. ուղեգրութիւն է գրում Ն. Մառը, որում այլեւայլ առիթներով յիշում է նաեւ կրօնափոխ համչէնցիներին¹⁸:

Զթուարկելով 19րդ դարի վերջին եւ 20րդ դարի սկզբին կրօնափոխ համչէնահայերին նուիրուած բոլոր յիշատակումները, առանձնացնենք 1917-18 թ. Հ. Յ. Տաշեանի գրած «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» անաւարտ աշխատութիւնը¹⁹, որ երկար տարիներ անտիպ էր եւ նրա «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին»²⁰ պատմա-ազգագրական ակնարկը, առանց որոնցից օգտուելու անհնար է պատկերացնել կրօնափոխ համչէնահայերին նուիրուած որեւէ լուր ուսումնասիրութիւն:

Գոցէ թէ ժամանակին, յատկապէս Մեծ Եղեռնին նախորդած տարիներին որոշ հայ մտաւորականներ նոյնպէս ուսումնասիրել են կրօնափոխ հայերին, բայց այդ նիւթերը կամ ոչնչացուել են կամ էլ ննջում են ինչ-որ զիւաններում: Ցաւօք, Մեծ Եղեռնի ողբերգութիւնն ապրած, այնուհետեւ խորհրդային կարգերի հալածանքներին ենթակայ հայ գիտնականները մի քանի տասնամեակ հնարաւորութիւն չունեցան անդրադառնալու կրօնափոխ համչէնահայերի խնդրին²¹: Նոյն պատճառներով, բայց այս անգամ թուրքական իշխանութիւնների հսկող աչքի ու արգելքների հետեւանքով սփիւռքահայ գիտնականները եւս չկարողացան ուսումնասիրել Սեւ Մովի հարաւ-արեւելեան առափնեայի կրօնափոխ ազգակիցներին²²: Դրանից չզլացան օգտուել որոշ

народностей Чорохского бассейна, Известия Кавказского отдела императорского Русского географического общества, т. 17, Тифлиси, 1904, ст. 366.

17. Э. ЛЮЗЕНЬ, *Берег Русского Лазистана*, Известия Кавказского отдела императорского Русского географического общества, т. 18, 1905-1906, Тифлиси, 1906, ст. 168-171.
18. Н. Я. МАРР, *Изъ поездки въ Турецкий Лазистанъ (впечатления и наблюдения)*, Известия Императорской Академии Наук, С. Петербург, 1910, ст. 608.
19. ՏԱՇԵԱՆ Հ. Յ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմագրական ուսումնասիրութիւն, Վիեննա, հտ. Ա., 1973, հտ. Բ., 1980, հտ. Գ., 1981:
20. ՏԱՇԵԱՆ Հ. ՅԱԿՈՐՈՍ, Հայ բնակչութիւնը Սեւ Մովէմ մինչեւ Կարին, պատմա-ազգագրական ակնարկ մը, Վիեննա, 1921:
21. Կրօնափոխ համչէնահայութիւնը յիշում է ԼԱԶԻԿԵԱՆ Լ.Ի., «Էջեր համշիմահայ պատմութիւնից», («Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1969, թիւ 2, էջ 115-144) յօդուածում: Ազգագրական արժէքաւոր նիւթերի հիման վրայ է իր կրօնափոխ հայրենակիցներին ներկայացրել համչէնցի բանահաւաք եւ ազգագրագէտ Բ. ԹՈՒՂԱ-ԲԵԱՆՆԸ, տե՛ս՝ «Համշէմահայերի ազգագրութիւնը» («Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն» մատենաշար, հտ. 13, Երեւան, 1981, էջ 29-35):
22. Պոնտոսի հայութեան նուիրուած ՅՈՎԱԿԻՄ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ (ԱՐՇԱԿՈՒՆԻ) «Պատմութիւն հայկական Պոնտոսի» (Պէյրութ, 1967) գրքում գրաւոր արբերներին հիման վրայ հեղինակը անդրադարձել է նաեւ կրօնափոխ համչէնցիներին (էջ 56-71):

օտար գիտնականներ․ այսպէս՝ թուրք պատմաբան Մ․ Ռեզան այնքան է առաջ անցնում, որ Ռիզէի եւ Նոփայի շրջանների կրօնափոխ հայերի մասին գրում է, թէ նրանք «ծագում են խեթական թուրքերից: Նրանք նախախալապական շրջանում թուրքերի կողմից ընդունուած կրօնի պատճառով մի որոշ ժամանակ հայերէն են խօսել, սակայն նրանք, այնուհետեւ ընդունելով մահմետականութիւն, վերադարձել են թրքութեան գիրկը, ստացել իրենց բուն ազգային դէմքը: Այդ ժողովուրդը հիմա թրքախօս է․ թուրքերէնից բացի այլ լեզու չգիտի»²³: «Նեթական թուրքեր» արտայայտութեան անհեթեթութեան չանդադառնալով, ասենք, որ Ռեզայի այն պնդումը, թէ կրօնափոխ համչէնահայութիւնը «թուրքերէնից բացի այլ լեզու չգիտի» լիովին հերքում են վերջին տասնամեակների ընթացքում հայ եւ օտար բանահաւաքների գրառած բանահիւսական նիւթերը²⁴:

Իսկ վրաց գիտնական Մաթէ Բաժաչին իր «Հիւսիս-արեւելեան Անատոլիայում բնակուող հեմչիները» յօդուածում քննադատելով թուրք հեղինակներին, որոնք «գիտակցաբար միակողմանի եւ կողմակալութեամբ են լուսաբանում ոչ թուրքական էթնիկական խմբերի հետ կապուած հիմնահարցերը»²⁵, ինքն է ընկնում մի այլ ծայրայեղութեան մէջ: Նա մերժում է նաեւ հայերէն սկզբնաղբիւրներն ու հայ գիտնականներին, պատճառաբանելով, որ «հայերէն լեզուով գոյութիւն ունեցող գրականութիւնը գիտականօրէն հաւաստի չենք համարում»²⁶ եւ կրօնափոխ համչէնահայերի հայկական ծագումը հաստատող այլազգի, այդ թւում եւ վրացի հետազոտողներին քաղուածաբար

23. RIZA M., *Benlik ve dilbirligimiz*, Ankara, 1982, s. 35-36.

24. Տե՛ս թիւ 38-44րդ ծանօթագրութիւնները:

25. ԲԱՄԱՇԻ ՄԱԹԷ, Հիւսիս-արեւելեան Անատոլիայում բնակուող հեմչիները, *Մնաթորի, Թբիլիսի*, 1985, թիւ 12, էջ 159 (վրացերէն):

26. Նոյնը, էջ 182: Հայկական աղբիւրների եւ հեղինակների ժխտումը այնտեղ է հասնում, որ Մ․ Բաժաչին իր ծանօթագրութիւններում յիշելով «չառ հայ հեղինակների վկայութիւնները» հիման վրայ գրուած Բ․ Թոլլաքեանի երեք յօդուածները, դրանք մերկապարսնոց յայտարարում է «կողմնակալ», այն դէպքում, երբ Բարունակ Թոլլաքեանը ծնունդով համչէնահայ է, մի քանի տարի թուրք ջարդարների դէմ կռուելուց յետոյ է ստիպուած եղել լքել հայրենիքը եւ նրա յօդուածները ոչ միայն պրպտող գիտնականի որոումների, այլեւ անձնական փորձի, տեսածի ու լսածի արդիւնք են, ինչով եւ խիստ արժէքատուրում են յատկապէս նրա ազգագրական եւ բանահիւսական ուսումնասիրութիւնները:

Մ․ Բաժաչին որպէս կեղծարարութեան օրինակ նշում է Հայկական Սովետական Հանրապետարանի «Համչէնցիներ» յօդուածը (Հտ․ 6, էջ 119), քանի որ նրա գրականութեան ցանկի միակ յղումը՝ «Բանքեր Նրեանի համայարանի» հանդէսում (1969, թիւ 2) տպագրուած ակադ․ Լեւոն Նաչիկեանի, էջեր համչիմահայ պատմութիւնից յօդուածը, ըստ Բաժաչիի, իրականում գոյութիւն չունի: Իր այս գիտը Բաժաչին արել է թերթելով․․․ «Պատմա-բանասիրական հանդէսը» եւ ինքն իր համար բացայայտել, որ «ոչ միայն այս, այլեւ հանդէսի որեւէ այլ համարում այս յօդուածը

ներկայացնելով, անսպասելիորեն, առանց ո՛րեւէ հիմնաւորման կամ վկայակոչման յայտարարում է, թէ «Հեմշինում բնակչութեան կէսից աւելի լազերից է բաղկացած, իսկ մնացած մասը իրենից ներկայացնում է խառնուրդ մասսա: Նրանց էթնոգենեզում գլխաւոր դեր է խաղացել հայ լուսաւորչական եկեղեցին, որին, ինչպէս երեւում է, միացել է լազերի որոշակի մասը»²⁷: Բաժաշին իր դրոյթի հիմնական կռուաններից է համարում վրաց հայագէտ Իվանէ Շիրակաձէի մի յօդուածը, որում հեղինակը Համշէնի բարբառի 5 բառ համարում է լազերէնից փոխառեալ²⁸: Ժամանակին Հայր Աճառեանը Հայերէնին լազերէնից անցած մի քանի տասնեակ փոխառութիւն է նշել²⁹, բայց երբեք ազգերի «էթնոգենեզում գլխաւոր դեր» չի՛ վերագրել փոխառութիւններին: Աւելացնենք, որ հենց Բաժաշիի յօդուածում է վկայակոչուած, որ կրօնափոխ համշէնահայերի մի մասը ձուլուել է լազերին³⁰:

Ինչպէս նշեցինք, մեծ էր կրօնափոխ, բայց հայախօս համշէնցիների թիւը նաեւ Համշէնին յարակից Պոփայի շրջանում, որ սահմանակից էր ՍՄՀՄին: ԻՒՍՖՍՀ եւ Թուրքիայի միջեւ 1921 Մարտի 16ին կնքուած պայմանագրով որոշուած սահմաններից այս կողմ մնացին մի քանի գիւղեր (Գըզլը-Թոփրակ, Ճառնալ, Գոնիոյ, Կորիակ, Ավքա կամ Ավգիա եւ Սարփ), որոնցում բնակուում էին նաեւ կրօնափոխ համշէնցիներ: Այդ բնակավայրերը մտան նոյն թուականին վերոյիշեալ պայմանագրով ստեղծուած Աջարիայի Ինքնավար Հանրապետութեան մէջ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1944 թուականին, երբ բազմաթիւ կրօնափոխ համշէնահայեր ռազմաճակատում էին, Ստալինի հրամանով նրանց ընտանիքներն աքսորուում են Ղըրղըզստան եւ Ղազախստան: Նրանք այսօր էլ սարսափով են յիշում ապրանքատար գնացքներով 17 օր տեւած «ճանապարհորդութիւնը», որի ընթացքում շատ զոհեր տուեցին: Չեն աքսորուում միայն մի քանի ընտանիք, որոնք ապրում էին Բաթումում: Իսկ միւսներին ցրում են Ղըրղըզստանով եւ Ղազախստանով: Այսպէս, իրարից հարիւրաւոր քիլոմետրեր հեռու սփռուած այս տարաբախտ հայերը զրկուում են բոլոր իրաւունքներից: Առանց զինուորական թոյլտուութեան՝ գիւղերից դուրս գալը համարուում էր յանցագործութիւն, ամուսնութիւններն

գոյութիւն չունին»: Մնում է ցանկալ, որ յարգարժան հեղինակը «Բանբեր Երեւանի համալսարանին» այսուհետեւ չչփոթի, «Պատմա-բանասիրական հանդէսի» հետ՝ դրանով անյարմար կացութեան մէջ չզցի իրեն էլ, «Մնաթորթ» ամսագրի ընթերցողներին էլ:

27. Նոյնք, էջ 160:

28. ՇԻԼԱԿԱՁԷ ԻՎԱՆԷ, Հայ-վրացական լեզուական համդիպումներ (լազերէնի եւ հայերէնի Համշէնի բարբառի աղբյուրումները), Արեւելեան բանասիրութիւն, Թբիլիսի, 1983, թիւ 5, էջ 32-39 (վրացերէն):

29. ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Ա., 1940, էջ 212-213:

30. ԲԱՄԱՇԻ Մ., նշ. յօդուածը, էջ 160:

խակ կատարում էին թոյլտուութեամբ: Նրանց արգելուած էր տալ անձ հաստատող որեւէ փաստաթուղթ, եւ միայն Ստալինի մահից յետոյ են իրաւունք ստանում անձնագիր ունենալ, բայց ազգութիւնը նշող կէտում հայի փոխարէն գրուում է «խեմշիլ», երբեմն էլ՝ «թուրք», այն պատճառաբանութեամբ, որ հայերը քրիստոնեայ են, իսկ ռուք՝ մահմեդական:

Ղըրղըզստանի Օշի եւ Ղազախստանի Զամբուլի մարզերում կան նաեւ բազմաթիւ աքսորեալ քրդեր, որոնց մի մասը միւսներէից տարբերուելու համար իրեն կոչում է «համշէնցի քուրդ»: Նրանք թրքախօս են եւ, ինչպէս իրենք ու կրօնափոխ համշէնահայերն են վկայում, դեռեւս մի քանի տասնամեակ առաջ այդ քրդերի մեծահասակները խօսում էին հայերէն եւ ասում, որ ծագումով համշէնցի հայ են: Նրանք եւս 1944ին են աքսորուել Աջարիայից, որտեղ 1926ի տուեալներով ապրում էր երեքհազար քուրդ³¹: Մեր հաշուարկներով նախկին ԽՍՀՄում սփռուած էին շուրջ երեքհազար կրօնափոխ, բայց հայախօս համշէնցիներ: Հայաստանում բնակութիւն հաստատելու մի քանի փորձերից յետոյ վերջին մէկուկէս տասնամեակում նրանց մի մասը Միջին Ասիայից տեղափոխուել է բնակուելու Կրասնոդարի երկրամասի Բելորեչենսկի ու Ապշերոնսկի շրջանները, որոնցում կան քրիստոնեայ համշէնցիների գիւղեր:

Կրօնափոխ համշէնահայերի պատմութիւնը, բարբառը, ազգագրութիւնն ու բանահիւսութիւնը ուսումնասիրելու նպատակով 1984 եւ 1987ին եղել են Ղըրղըզստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում եւ Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում³²: Նրանց որոշ ներկայացուցիչներ էլ իմ հրաւերով 1984ին եւ 1988ին հիւրընկալուել են Երեւանում:

Կրօնափոխ համշէնահայերը ապրում են փոքր խմբերով, տեղացիների հետ խառը տարաբնակմամբ: Անկախ գիւղերի հեռաւորութիւնից, համախմբուած են եւ ուրախութեան թէ տխրութեան պահերին միասին են: Հիմնականում զբաղւում են երկրագործութեամբ եւ անասնապահութեամբ, մասնաւորապէս՝ խաշնարածութեամբ:

Աքսորից յետոյ զգալի փոփոխութիւններ է կրել համշէնահայերի տնայինութիւնը: Ղազախստանում տափաստանային տեղանքի եւ ան-

31. Большая Советская Энциклопедия, Москва, 1926, т. 1, ст. 591.

32. Տե՛ս ՎԱՐԴԱՆԵԱՆ Ս., Կրօնափոխ համշէնահայերի պատմա-ազգագրութիւնը Երեւանում «Հանրապետական գիտական նստաշրջան՝ նուիրուած 1984-1985 ազգագրական եւ բանագիտական դաշտային հետազոտութիւնների հանրագումարին», Երեւան, 1987, էջ 95-97, ՎԱՐԴԱՆԵԱՆ Ս., Համշէնահայերի բնակարանային համալիրը եւ կրած փոփոխութիւնները, տե՛ս «Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988 ազգաբանական եւ բնագիտական դաշտային հետազոտութիւնների հիմնական արդիւնքները», Երեւան, 1990, էջ 64-67:

տառների բացակայութեան պատճառով՝ տները կառուցուում են աղիւսից, մէկ յարկանի: Հուսում աղիւսով են կառուցուում գոմը, ամառային խոհանոցը, ամբարը, բաղնիքը եւայլն: Բակում պատուաւոր տեղ ունեն սավթին³³ եւ ցցաչէն փուռը (հազուադէպ՝ երկանիւ շարժական փուռը):

Ի տարբերութիւն Ղազախստանի, Ղըրղըզստանը լեռնային եւ համեմատաբար անտառներով հարուստ հանրապետութիւն է: Այդ գործոնը դրոշմ է դրել կրօնափոխ համընդհանրային տների վրայ, որոնք թէեւ կառուցուում են հիմնականում հում աղիւսից եւ սպիտակեցուում, բայց բոլոր օժանդակ շինութիւնները փայտից են: Այստեղ էլ տները մէկ յարկանի են, գոմից առանձին: Ինչպէս Ղազախստանում, այստեղ էլ եզրպատացրեն չմշակելու հետեւանքով վերացել է համընդհանրային ականդական կորորը³⁴, նոյնպէս եւ ծխախոտագործութեամբ չզբաղուելու հետեւանքով՝ երացուել են ծխախոտի մաշիւնան (չորանոցը) ու մաղազան (պահեստը): Այստեղ էլ սավթին եւ փուռը, ինչպէս Ղազախստանում, յար եւ նման են տեղացիների պատրաստածին:

Կրօնափոխ համընդհանրայինը բաժանուած են տասից աւելի ազգակցական խմբերի: Ամենամեծը Կարախբարահիմօղլիների (Կարախբարահիմով) ազգատոհմն է, որի մի մասը (288 հոգի) համախմբուել է Ղազախստանի գիւղերից մէկում: Ազգատոհմի անուանախնդիրը Իբրահիմն է: Ըստ մեր կազմած տոհմածառին՝ հետեւում է թօթ սերունդ: Նրանք յիշում են, որ իրենց նախկին ազգանունը Ճերմըկցի (այսինքն՝ Ճերմակեան) է եղել: Կարախբարահիմօղլիները հիմնականում խարտեաչ են եւ կապուտաչեայ, միւս ազգատոհմերում գերակշռում են թխաները:

Նրանք սովորաբար խուսափում են խառն ամուսնութիւններից, բայց վերջին տասնամեակում՝ այլազգեների հետ ամուսնութիւնների աճ է նկատուում: Ընտանիքները բազմանդամ են, յաճախ ունենում են 5-7, երբեմն 10 երեխայ: Ղըրղըզստանում նրանք յաճախում են զըրըզգական, իսկ Ղազախստանում, Ուզբեկստանում եւ Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում՝ ռուսական դպրոցներ: Չնայած ուսումնաստենչութեանն ու արտակարգ ընդունակութիւններին, ծնողները զգուշանում են զաւակներին օտար վայրեր ուղարկել՝ բարձրագոյն կրթութեան: Սակայն, վերջին մէկուկէս տասնամեակում այդ արգելքը

33. Սավթին 4-5 քմ. ուղղանկիւն կամ քառանկիւն փայտէ կամ երկաթէ բարձր թախ է, որի եզրերը ճաղաչար են:
 34. Կորորը համընդհանրային ականդական մթերանոցն է. կառուցուում է բակում, գետնից չուրջ երկու մետր բարձրութեան ցցերի կամ սիւնների վրայ, որպէսզի կենդանիներին հասու չլինի: Պատերը հիւսում են ճիւղերից կամ բարակ ծառայներից, երբեմն էլ լինում են տախտակածածկ, այնպէս որ օդ խաղայ եւ կորորում պահուող եզրպատացրիները չփճանայ: Նլումուտի համար օգտագործում են շարժական սանդուղք:

յաղթահարելով՝ բարձրագույն կրթութիւն են ստացել քսանից ականի բրիտասարդներ:

Կրօնափոխ համչէնահայերը շատ մեծ նշանակութիւն են տալիս աւագութեան կարգին՝ բոլոր հարցերը լուծուում են ընտանիքի գլխաւորների կամ աւագների կողմից: Նոյնիսկ սովորական խօսքուզրոյցի ժամանակ աւագների ներկայութեամբ՝ յաճախ կրտսերները չեն խօսում:

Թէեւ օտարներից խոսափում են, բայց հիւրասէր են, օգտագործում են աւանդական ճաշատեսակներ: Արդուզարդով ձգտում են չտարբերուել հարեւան ժողովուրդներից, բայց դրա հետ մէկտեղ որոշ չափով պահպանել են իրենց տարազի տարրերը:

Կրօնափոխ համչէնահայերը բնութագրուում են իբրեւ քաջ, աշխատասէր, սակաւապէտ, լրջախոհ, զգուշաւոր, ինքնամփոփ եւ բարոյական խիստ չափանիշներով առաջնորդուող: Ընդհանուր առմամբ կրօնամոլ չեն, եթէ նոյնիսկ մզկիթ կայ, ապա այցելում են բացառապէս 50-60ից բարձր տարիքի տղամարդիկ: Նրանք գիտեն, որ իրենց նախնիները մահմետականութիւն են ընդունել արիւնոտ սպանդի հետեւանքով: Ղըրղըզստանում մոլլա Հեմդի Ակբուլուկօղլին³⁵ (ծն. 1904 թ.), այդ հաստատելով, բերեց մի արաբատառ ձեռագիր գիրք, որին իմ քրիստոնեայ լինելը պատճառաբանելով, չթոյլատրեց ձեռք տալ: Նրա ասելով, գրքում կրօնական նիւթերի, զանազան բուժամիջոցների եւ այլնի հետ, գրառում կար նաեւ համչէնահայերի բռնի կրօնափոխութեան մասին: Գրառումը կատարուել էր հնում՝ հեղինակը Ակբուլուկօղլի Ալի էֆենդին էր: Ըստ այդմ կրօնափոխութիւնը տեղի է ունեցել 1780ական թուականներին: Ձեռագրի այդ հատուածը, իրենց վկայութեամբ, մի քանի տարի առաջ կարդացել են նաեւ մոլլա Հեմդիի ազգականներից ոմանք, բայց այժմ նա հաւաստիացնում էր, որ թրջուելու հետեւանքով այն ջնջուել է:

Ամենամեծ տոհմի՝ Կարաիբրահիմօղլիների աւագը՝ Իսխակ Կարաիբրահիմօղլը³⁶ վկայեց, որ իր մեծերից լսել է, որ իրենք կրօնափոխուել են ջարդի հետեւանքով եւ որ իրենց նախնիները Համէն են գաղթել Վանից: Ինքը՝ Իսխակը, որ մեծահարուստ ու ճանաչուած ընտանիքի զաւակ է եղել, Մեծ Մղեռնի տարիներին իրենց գիւղում թաքցրել է Արդուկինի եւ այլ վայրերի 18 հայերի, որոնց այնուհետեւ անտառներով անցկացրել է ռուսական սահմանը: Նման ձեռնարկումները կարող էին ծանր հետեւանք ունենալ, որովհետեւ թուրքերը սպառնում էին, թէ քրիստոնեայ հայերին կոտորելուց յետոյ կրօնափոխների հերթն է գալու, որովհետեւ նրանք միեւնոյն է, հայ են:

35. Գրառումը կատարել եմ 1987ին՝ Ղըրղըզստանի Պեկաբադ գիւղում:

36. Գրառումը կատարել եմ 1984ին՝ Ղազախստանի Զիմբենդի մարզի Սայրամի լրջանի Զիրիկնո գիւղում:

Մէկ ուրիշը՝ Հաքի Քոչանիձէն³⁷ (ծն. 1900 թ.), որին խոստացել էին իր Քոչամեզօղլի ազգանունը վրացացնելու դէպքում չաքսորել, բայց յետոյ դրժել էին, պատմում էր, որ իր մեծերից լսել է, թէ իրենք անեցիներ են, որ 680 տարի առաջ Անի քաղաքում, ուր 8 հազար ընտանիք էր ապրում, երկրաշարժ է եղել, եւ շատերն են զոհուել, իսկ որբերը սփռուել են տարբեր վայրերում: Նրանք, ովքեր ընկել են թուրքերի ձեռքը՝ կրօնափոխուել են եւ լեզուն մոռացել, իսկ իրենց նախնիները, քանի որ խմբով են եղել, թէեւ կրօնափոխուել են, բայց լեզուն չեն մոռացել: Ըստ նրա, համչէնցիները այս անեցիների հետեւորդներն են:

Այս պատմութիւնը մէկ անգամ եւս հաստատում է, թէ որքան ուժեղ է նշանաւոր Անի քաղաքի մասին ժողովրդի յիշողութիւնը, որ այսքան դարեր անց, նոյնիսկ օտար անուն-ազգանունով, օտար հաւատով, արաբերէն գրել-կարդալ իմանալու շնորհիւ շրջակայ զրոյրզական գիւղերում ու մօտակայ Կզըլ-Կիյա քաղաքում մեծազոյն յարգանք վայելող եւ մոլլա Հաքի անուանուող այս մարդը՝ Պամիրի ստորոտում, Ղըրղզստանի հեռաւոր գիւղերից մէկում նստած հպարտանում է իր անեցի ծագմամբ:

Համչէնցիների անիական ծագման աղբյւրներին եւ աւանդութիւններին անդրադարձել են նրանց ուսումնասիրած գրեթէ բոլոր գիտնականները: Այս հարցի քննարկումը թողնելով ա՛յլ առիթի, այժմ մի քանի խօսք կրօնափոխ համչէնահայերի բարբառի ու բանահիւսութեան մասին: Ասենք, որ նրանց բարբառն ու բանահիւսութիւնը ցարդ չեն ուսումնասիրուած. Սեւ Գետում լսած մէկ երգ եւ 9 խաղիկ է 1895ին հրատարակել Ս. Հայկունին³⁸, իսկ 1918ին 115 բառ է վրացատառ գրառել Ի. Կիփիձէն, ինչի հիման վրայ Ն. Մառը 1925ին տպագրել է «Նիւթեր Համչէնի բարբառի մասին» յօդուածը³⁹: Շուրջ չորս տասնամեակ լուութիւնից յետոյ նշանաւոր արեւելագէտ՝ Ժորժ Դիւմեզիլը, 1962ին Ստամբուլում մի մահմետական համչէնահայ ուսանողից լատինական տառադարձութեամբ գրառել է որոշ բանահիւսական նիւթեր⁴⁰, այնուհետեւ մի քանի տարի հանդիպելով նրան, նոր նմոյշներ է գրառել եւ ֆրանսերէն թարգմանութեանը զուգահեռ երեք զրոյց հրատա-

37. Գրառումը կատարել եմ 1984ին՝ Ղըրղզստանի Օշի մարզի Կզըլ-Կիյա քաղաքի մերձակայ Ուչ-Կորգան գիւղում:

38. ՀԱՅԿՈՒՆԻ Ս., նշ. յօդուածը, էջ 293-294:

39. Н. МАРР, Материалы по хемшинскому наречию армянского языка (по записи И. А. Кипшидзе), Записки коллегии востоковедов при Азиатском музее Российской Академии наук, т. 1, Ленинград, 1925, ст. 75-80.

40. DUMÉZIL GEORGES, Notes sur le parler d'un Arménien musulman de Hemsin, Mémoires de l'Académie Royale de Belgique, Classe des Lettres et des Sciences Morales et Politiques, coll. in 8, tome LVII, fasc. 4 1964.

րակել⁴¹: Ստամբուլում նա նիւթեր է ժողովել նաեւ մի տասնութամեայ մահմետական համշէնահայից, որոնք (երեք զրոյց եւ 9 խաղիկ) հրատարակել է համապատասխան գիտական մեկնաբանութիւններով եւ զուգահեռ ֆրանսերէն թարգմանութեամբ⁴²: Իսկ նախկին Սորհրդային Միութեան մահմետական համշէնահայերից 1967ին Բաթումում 6 խաղիկ (մանի) է գրառել Բ. Թոռլաքեանը⁴³: Իմ գրառած նիւթերից 9 հեքիաթ եւ իրենց նօթագրութեամբ մէկ երգ ու 28 խաղիկ է կից բառարանով հրատարակուել «Ձայն Համշէնական» ժողովածուում⁴⁴:

Այս բանահիւսական նմոյշները իրենց զուգահեռներն ունեն թէ՛ քրիստոնեայ համշէնահայերի, թէ՛ առհասարակ Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան հատուածներում գրառուած բանարուեստի հետ եւ առաւել կամ նուազ ամբողջական տարբերակներ են: Յատկանշական է, որ մեր օրերում եւս կրօնափոխ համշէնցիները այլեւայլ առիթներով խաղիկներ են հնարում: Նրանք հիանալի գիտեն նաեւ նախնեաց պարերը, իսկ աւանդական նուագարաններից նախընտրում են քեմենչան⁴⁵:

Ըստ մեր ուսումնասիրութիւնների՝ կրօնափոխ համշէնահայերը խօսում են Համշէնի բարբառի երկու խօսուածքներով՝ արդիւցիների եւ թուրքեւանցիների: Թուրքիայում գրառուած բանահիւսակութիւնը վկայում է, որ պատմական հայրենիքում բնակուողները եւս խօսում են այս երկու խօսուածքներով: Պահպանելով հանդերձ գրաբարի բառային եւ քերականական բազմաթիւ ձեւեր, այս խօսուածքները մի շարք դէպքերում կրել են զարմանալի փոփոխութիւններ եւ զգալապէս տարբերում են քրիստոնեայ համշէնահայերի Ձնիկի ու Տրապիզոնի խօսուածքներից:

Աւարտելով նախկին Սորհրդային Միութիւնում բնակուող կրօնափոխ համշէնահայերին նուիրուած պատմա-ազգագրական այս համառօտ ակնարկը, աւելացնենք, որ այսօր էլ պատմական Հայաստանի տարբեր գաւառներում սփռուած կրօնափոխ հայերի այլեւայլ խմբեր սպասում են իրենց ուսումնասիրողներին: Իսկ առանց այդ տարաբախտ բեկորների ուսումնասիրութեան՝ թերի կը լինի մեր ժողովրդին պատմութիւնը:

ՍԵՐԳԷՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

41. DUMÉZIL GEORGES, *Trois récits dans le parler des Arméniens musulmans de Hemsin*, *Révue des études Arméniennes*, tome 4, Paris, 1967. p. 19-35.
42. DUMÉZIL GEORGES, *Notes sur le parler d'un Arménien musulman d'Ardala (vilâyet de Riza)*, *Révue des études Arméniennes*, tome 2, Paris, 1965, p. 136-142.
43. Նշխարմեր Համշէնի եւ Տրապիզոնի բանահիւսութեան, *ժողովեց, կազմեց եւ ծանօթագրեց* Բ. ԹՈՐԼԱՔԵԱՆ, *Երևան*, 1985, էջ 90-92:
44. Ձայն Համշէնակամ, *ժողովածու*, գիրք Գ., *կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց եւ ծանօթագրեց* ՍԵՐԳԷՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ, *Երևան*, 1989, էջ 208-246:
45. Քեմենչեան կամ քեմեչեան համշէնահայերի շրջանում տարածուած լարային-աղեղնային նուագարան է, որ նուագում են ծնկին յենած: Արտաքսապէս շատ նման է քեմոնային (քամանի), բայց ր տարբերութիւն նրա՝ ունի երեք լար: